ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4 , հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«31» 05 2023թ.
No 004749

«ԹԻ ԷԼ ԷՍ ԿՈՆՏԱԿՏ ԷՅ ԷՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԻԳՈՐ ԿՈԼԻՆԿՈՅԻՆ

(Հասցե՝ ք" Երևան, Կենտրոն, Վարդանանց փ"4, 50)

Հարգելի՛ պարոն Կոլինկո,

Հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) վերապահված՝ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունը պատշաճ իրականացնելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. «Թի Էլ Էս Կոնտակտ Էյ Էմ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և վերջինիս հետ համագործակցող դեսպանատների միջև կնքված և գործող պայմանագրերի, համաձայնագրերի դրանց փոփոխությունների պատճենները,
2. Ընկերության և վերջինիս հետ համագործակցող տուրիստական գործակալությունների, ինչպես նաև այլ՝ հայտագրման գործընթացի հետ առնչություն ունեցող կազմակերպությունների միջև կնքված և գործող պայմանագրերի, համաձայնագրերի դրանց փոփոխությունների պատճենները,
3. Ընկերության հետ համագործակցող յուրաքանչյուր դեսպանատան կողմից օրական հատկացվող հայտագրման տեղերի քանակի վերաբերյալ,

4. ի՞նչ սկզբունքով և ինչպե՞ս է աշխատում արտոնագրեր ստանալու համար հայտագրման համակարգը, մասնավորապես օրվա/շաբաթվա/ամսվա ընթացքում ի՞նչ պարբերականությամբ է և ո՞ր ժամերին է հասանելի դառնում համակարգը տեղեր ամրագրելու համար:

5. արդյո՞ք առկա է հայտագրման համակարգում օրական կտրվածքով հնարավոր անձանց առավելագույն քանակի սահմանափակում՝ առկայության դեպքում նշելով համապատասխան առավելագույն քանակը,

6. արդյո՞ք ֆիզիկական անձանց համար հայտագրման համակարգում տեղ ամրագրելուց հետո առկա է հնարավորություն իրականացնելու հայտատուի անվանափոխություն,

7. արդյո՞ք առկա է մեկ հայտով խմբակային, այդ թվում՝ ընտանիքի անդամներով հայտագրման հնարավորություն,

8. քանակական ի՞նչ հարաբերակցությամբ են հայտագրման համակարգում ամրագրման համար հասանելի տեղերը բաշխվում ֆիզիկական անձանց և տուրիստական գործակալությունների միջև,

9. ի՞նչ համամասնությամբ են տուրիստական գործակալությունների հայտագրման համար հատկացված տեղերը բաշխվում վերջիններիս միջև,

10. արդյո՞ք առկա են տարբերություններ տուրիստական գործակալությունների միջոցով կամ որպես ֆիզիկական անձ դիմելու ընթացակարգերի միջև՝ առկայության դեպքում ներկայացնելով տարբերություններն ու դրանց հիմնավորումները՝ առկայության դեպքում կցելով հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

11. ի՞նչ չափանիշներով է իրականացվում տուրիստական գործակալությունների միջոցով կամ որպես ֆիզիկական անձ արտահերթ եղանակով հայտագրվելու հնարավորության գնահատումը,

12. 2023 թվականի հունվարից մինչև 2023 թվականի մայիսը ներառող ժամանակահատվածում Ընկերությանը որպես ֆիզիկական անձ կամ տուրիստական գործակալությունների միջոցով դիմած ֆիզիկական անձանց քանակի վերաբերյալ՝ տարանջատելով ըստ «սովորական», «պրայմ թայմ», «պրեմիում» եղանակների՝ ամսական կտրվածքով՝ համաձայն կից ներկայացված ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

Պահանջվող տեղեկատվության էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) տարբերակն անհրաժեշտ է ուղարկել info@competition.am և nare.muradyan@competition.am էլեկտրոնային հասցեներով:

Տեղեկացնում ենք նաև, որ.

1.«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդող օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

4. Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

5. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

6. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

7. **Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:**

Առդիր՝ «1» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Մրցակցության գնահատման և վերահսկողության վարչություն
Կատարող՝ Նարե Մուրադյան
Հեռ. (+374 60) 830-840 (230)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 9 հունիսի 2023 թվական:

Ձևանմուշ

ՏԵՂԵԿԱՆՔ

2023 թվականի հունվարից մինչև 2023 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում արտոնագրերի ստացման համար հայտագրված անձանց քանակի վերաբերյալ

Հ/Հ	Ժամանակահատված	Ֆիզկական անձ/հոգի			Տուրիստական գործակալության միջոցով դիմած ֆիզիկական անձինք			
		«Սովորական» եղանակով դիմած ֆիզ. անձանց քանակ	«Պրայմ թայմ» եղանակով դիմած ֆիզ. անձանց քանակ	«Պրեմիում» եղանակով դիմած ֆիզ.անձանց քանակ	Տուրիստական գործակալություն 1*	Տուրիստական գործակալություն 2	Տուրիստական գործակալություն 3	Տուրիստական գործակալություն ...
					ֆիզ. անձանց քանակ	ֆիզ. անձանց քանակ	ֆիզ. անձանց քանակ	ֆիզ. անձանց քանակ
1	Հունվար 2023							
2	Փետրվար 2023							
3	Մարտ 2023							
4	Ապրիլ 2023							
5	Մայիս 2023							

Կազմակերպության տնօրեն _____

ԿՏ

* **Անհրաժեշտ է նշել տուրիստական գործակալության անվանումը:**

** **Տեղեկանքն էլեկտրոնային եղանակով անհրաժեշտ է ուղարկել l.ghazaryan@competition.am և info@competition.am էլ. հասցեներով:**

*** **Տեղեկանքի յուրաքանչյուր էջ անհրաժեշտ է վավերացնել կազմակերպության կնիքով:**

**** **Ձևանմուշի էկելտրոնային տարբերակը ստանալու համար անհրաժեշտ է էլեկտրոնային նամակ ուղարկել nare.muradyan@competition.am հասցեով՝ նամակի "subject" կամ "тема" դաշտում նշելով "Form" բառը:**

ՄՊՎ վարչություն, Նարե Մուրադյան, հեռ. (060) 830 840 (230):